ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ՀԱՄԱԼԻՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N << ՀՀ ՄՆ ՄԾԻԳ-ԲԸԱԾՁԲ-16/69-1>>

ք. Երևան «29» 07 2016 թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը, (այսուհետև՝ Պատվիրատու), ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Ս. Մուրադյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՀՊՕ-Զորավիգ» ՍՊԸ և «Հուշարձանների վավերագրում» ՍՊԸ կոնսորցիումը, ի դեմս Ընկերության տնօրեններ Ա. Հովհաննիսյանի և Գ. Խաչատրյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ Արարատի մարզի Լուսառատ համայնքի Արտաշատ քաղաքատեղիի բաղնիքի խճանկարի նորոգման, ամրակայման և անհրաժեշտության դեպքում՝ տեղափոխման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման, համալիր փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) նախագծման համար հիմք հանդիսացած նյութերի տեխնիկական բնութագրերը կազմել <Գնումների մասին> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4)պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով

5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երեք օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 1 430 000 (մեկ միլիոն չորս հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է

Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25 դեկտեմբերի 2016թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի քսան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և սկզբնական նախագծի քսան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ

կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

7.5 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.7 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.9 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.10 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.11 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

ՀՀ մշակույթի նախարարություն

Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք,

հեռ.՝ (010) 58-51-78, (011) 58-51-78

հ/հ 900011474880

ՀՎՀՀ 02508054

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն

________________ Ս. Մուրադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ (ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ)

«ՀՊՕ-Զորավիգ» ՍՊԸ

Հասցեն՝ ք. Երևան Ձ. Քանաքեռցու 77/1

հեռ.՝ (010) 74-79-01

էլ. հասցե՝ ...yan@mail.ru

ՀՎՀՀ 025...3

հ/հ 1604002...0

«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ Արաբկիրի մասնաճյուղ

________________ Վ. Խաչատրյան

Կ.Տ.

«Հուշարձանների վավերագրում» ՍՊԸ

Հասցեն՝ ք. Երևան, Շենգավիթ, Դոդոխյան փ. 34/3

հեռ.՝ (094) 55-53-84

էլ. հասցե՝ ...isyan-alik@mail.ru

ՀՎՀՀ 022...534,

հ/հ 15700...100,

...ԲԸ

________________ Ա. Հովհաննիսյան

Կ.Տ.

Հավելված 1

<<29>> 07 2016 թ. կնքված

«ՀՀ ՄՆ ՄՇԻԳ-ԲՇԱՇՁԲ-16/69-1» ծածկագրով գնման պայմանագրի

Չափաբաժին N 1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՔԱՍ ՔԱՂԱՔԱՏԵՂԻՆ ԲԱՂՆԻՔԻ ԽՃԱՆԿԱՐԻ ԱՄՐԱԿԱՑՄԱՆ, ՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ՝ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԳԻՏԱՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
	I.Վավերագրման և ուսումնասիրման համար նախատեսվող աշխատանքներին ներկայացվող պահանջները (Աղյուսակ N 1)
	II.Գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներին ներկայացվող պահանջները (Աղյուսակ N 2)
	III. Առդիր նյութերի ցանկ (թղթային և/կամ էլեկտրոնային (Աղյուսակ N 3)

ԱՂՅՈՒՍԱԿ N 1՝ Վավերագրման և ուսումնասիրման համար նախատեսվող աշխատանքներին ներկայացվող պահանջները

հ/հ	Նախատեսվող աշխատանքի անվանումը		Աշխատանքի համառոտ նկարագրությունը	Աշխատանքի կատարման պահանջներ			
				Մասնագիտական	Որակական	Համաձայնեցում	Այլ
	1		2	3	4	5	6
1	Մատենագրական, արխիվային, գիտահետազոտական նյութերի հավաքում և ուսումնասիրում		Մատենագրական նյութերի վերաբերյալ տվյալներ (ցանկ)	համապատասխան լիցենզիա ունեցող, կամ մասնագիտացում ունեցող կազմակերպություն		4 և 5 կետերում նշված աշխատանքները սահմանված կարգով համաձայնեցնել պետական լիազոր մարմնի հետ	Էլեկտրային նյութերի ալբոմ: Ներկայացնել թղթային՝ 2 և էլեկտրոնային՝ 1 օրինակ
2	Տեխնիկական վիճակի մասին եզրակացություն		Հուշարձանի ակնադիտական ուսումնասիրությունների հիման վրա	լիցենզավորված կազմակերպություն			
3	Չափագրություն	ճարտարապետական-հնագիտական	Մետրային, անհրաժ. դեպքում՝ նաև ֆոտոգրանոմետրիկ /Նշելով շարվածքը, քայքայումները, նյութը և շերտագրությունը/, բեկորներ,լուսանկարներ	Շահող կազմակերպության հեղինակի ղեկավարությամբ մասնագիտական խումբ (նախագծային լիցենզիա, մասնագիտացում ունեցող կազմակերպություն) հնագետի մասնակցությամբ:	Ընթեռնելի մասշտաբով և հիմնական բոլոր չափերի տեղադրմամբ		
4	Տեխնիկական վիճակի մասին եզրակացություն		տեղում՝ ակնադիտական և մասնագիտական նյութերի	լիցենզավորված կազմակերպություն	բնութագրերին կցել		

			ուսումնասիրման հիման վրա		փաստող/նկարագրող/ նյութեր / գծագրեր,լուսանկարներ/		
5	Նախագծային առաջադրանքի կազմում		տեխնիկական վիճակի մասին ակտի հիման վրա	լիցենզավորված կազմակերպություն	համաձայն ձևաչափի		
6	Տեղագրական հանույթ		Բաղնիքի հարակից տարածքի /մոտ 10 մ/ կառույցների մոտեցման ճանապարհների կամ արահետների տեղադրմամբ	համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպություն	հորիզոնական 0,5 մ նիշերով Մ 1:100: Գեոդեզիական հանույթը կատարել տախոմետրիկ գործիքի միջոցով (թվային տվյալ)		
7	Ինժեներական հետազոտություններ	հիդրոերկրաբանական	եզրակացություն	համապատասխան լիցենզիա ունեցող գիտահետազոտական կազմակերպություն	ըստ նորմատիվ պահանջների և լաբորատոր տվյալների		
		երկրաբանական	եզրակացություն				
		նյութագիտական	եզրակացություն				

ԱՂՅՈՒՍԱԿ N 2՝ Գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներին ներկայացվող պահանջները

Հ/հ	Նախատեսվող աշխատանքի անվանումը		Աշխատանքի համառոտ նկարագրությունը	Աշխատանքի կատարման պահանջներ			
				Մասնագիտական	Որակական	Համաձայնեցում	Այլ
	1		2	3	4	5	6
1	**գիտանախագծային փաստաթղթերի կազմման 1-ին /էսքիզային/ փուլ**	համալիր հետազոտությունների արդյունքների մասին հաշվետվությունների	կատարված ուսումնասիրությունների և ինժեներական հետազոտությունների արդյունքների հիման վրա	հեղինակային խումբ (նախագծային լիցենզիա ունեցող կազմակերպություն)	հիմնավոր վերլուծությամբ	Յուրաքանչյուր փուլի աշխատանքը սահմանված կարգով համաձայնեցնել պետական ֆիզոր մարմնի հետ	Ներկայացնել թղթային՝ 2 և էլեկտրոնային՝ 1 օրինակ
		գիտանախագծային խնդիրների լուծումների հիմնավորում	հնարավոր (տեղում պահպանման կամ տեղափոխման) տարբեր լուծումների տեսական վերլուծությամբ				
		իրականացվող աշխատանքների կազմակերպման հիմնադրույթներ	նախատեսել հիմնական ծավալների իրականացման հերթականությունը՝ ըստ տարիների /մոտ՝ 3/ և աշխ. կազմակերպման դրույթների				

ԱՂՅՈՒՍԱԿ N3 ՝ Առդիր նյութերի ցանկ (թղթային և/կամ էլեկտրոնային)

Հ/հ	Անվանումը	Էջերի քանակը	Ծանոթություն

	1	2	3	
1	Պահպանական գոտու նախագիծ	1 թերթ	ծանոթանալ ՀՀ ՄՆ ՊՄՀՊ գործակալությունում	
2	Տեխնիկական վիճակի վերաբերյալ ակտի ձևանմուշ	2 թերթ	Կցվում են	
3	Նախագծային առաջադրանքի ձևանմուշ	3 թերթ		
4	Պեղման հաշվետվություն		ծանոթանալ ՀՀ ՄՆ ՊՄՀՊ գործակալությունում	

Աշխատանքի կատարման ժամկետը	
սկիզբը	ավարտը
Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	20 օգոստոսի 2016թ.

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք,
հեռ.՝ (010) 58-51-78, (011) 58-51-78
հ/հ 900011474880
ՀՎՀՀ 02508054
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում

__________ (ստորագրություն) / Ա. Մուրադյան

Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ (ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ)

«ՀՊՕ-Զորավիգ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան Ձ. Քանաքեռցու 77/1
հեռ.՝ (010) 74-79-01
էլ. հասցե՝ s_musoyan@mail.ru
ՀՎՀՀ 02548313
հ/հ 16040025611300
ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ Արաբկիրի մաս. մասնաճյուղ

__________ Գ. Խաչատրյան
(ստորագրություն)

Կ.Տ.

«Հուշարձանների վավերագրում» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Շենգավիթ, Դոդոխյան փ. 34/3
հեռ.՝ (094) 55-53-84
էլ. հասցե՝ hovhannisyan-alik@mail.ru
ՀՎՀՀ 00265634,
հ/հ 1570023[illegible]21560100,
«[illegible] բանկ» ՓԲԸ

__________ Ա. Հովհաննիսյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2

<<29>> 07 2016 թ. կնքված

«ՀՀ ՄՆ ՄՇԻԳ-ԲԸԱՇՁԲ-16/69-1» ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում						
		հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	ՀՀԱրարատի մարզի Լուսառատ համայնքի Արտաշատ քաղաքատեղիի բաղնիքի խճանկարի նորոգման, ամրակայման և անհրաժեշտության դեպքում տեղափոխման գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման, համալիր փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ	1430000	1430000	1430000	1430000	1430000	1430000	1430000.0

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք,
հեռ.՝ (010) 58-51-78, (011) 58-51-78
հ/հ 900011474880
ՀՎՀՀ 02508054
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում

(ստորագրություն) **Ս. Մուրադյան**

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ (ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ)

«ՀՊՕ-Զորավիգ» ՍՊԸ

Հասցեն՝ ք. Երևան Զ. Քանաքեռցու 77/1
հեռ.՝ (010) 74-79-01
էլ. հասցեն՝ s_musoyan@mail.ru
ՀՎՀՀ 02548313
հ/հ 16040025611300
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ Արաբկիրի շրջ. բաժին

(ստորագրություն) **Գ. Խաչատրյան**

Կ.Տ.

«Հուշարձանների վավերագրում» ՍՊԸ

Հասցեն՝ ք. Երևան, Շենգավիթ, Դորոխյան փ. 34/3
հեռ.՝ (094) 55-53-84
էլ. հասցեն՝ hovhannisyan-alik@mail.ru
ՀՎՀՀ 02265634,
հ/հ [illegible]60100,
[illegible] ՓԲԸ

(ստորագրություն) **Ա. Հովհաննիսյան**

Կ.Տ.

Հավելված 3

<<29>> 07 2016 թ. կնքված

N «ՀՀ ՄՆ ՄՏԻԳ-ԲԸԱՇՁԲ-16/69-1» ծածկագրով գնման պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ (ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ)	
ՀՀ մշակույթի նախարարություն Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք, հեռ.՝ (010) 58-51-78, (011) 58-51-78 հ/հ 900011474880 ՀՎՀՀ 02508054 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում	**«Հուշարձանների վավերագրում» ՍՊԸ** Հասցեն՝ ք. Երևան, Շենգավիթ, Դողոիյան փ. 34/3 հեռ.՝ (094) 55-53-84 էլ. հասցեն՝ hovhannisyan-alik@mail.ru ՀՎՀՀ 02265634, հ/հ 1570023821560100, «Ամերիաբանկ» ՓԲԸ	**«ՀՊՕ-Զորավիգ» ՍՊԸ** Հասցեն՝ ք. Երևան Զ. Քանաքեռցու 77/1 հեռ.՝ (010) 74-79-01 էլ. հասցեն՝ s_musoyan@mail.ru ՀՎՀՀ 02548313 հ/հ 16040025611300 «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ Արաբկիրի շրջ. բաժին

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____ ստորագրություն	_____ ստորագրություն
_____ ազգանուն, անուն	_____ ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1

<<29>> 07 2016 թ. կնքված

N «ՀՀ ՄՆ ՄՏԻԳ-ԲԸԱՇՁԲ-16/69-1» ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ——————————————————————ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
——————————————ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ——— -ին կնքված N ——————
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ——— – -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

——————————————
ազգանուն, անուն

——————————————
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

——————————————
ազգանուն, անուն

——————————————
ստորագրություն